Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի

ռեկտորի պարտականությունները

կատարող Է. Ալեքսանյան

«21.05.2025թ.»

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Արաշ Դերամբարշի՝ «Սննդային թափոնների հիմնախնդիրներն ու իրավական հակասություններն Անտիկ ժամանակաշրջանից մինչև այսօր» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Արաշ Դերամբարշի (այսուհետ՝ Հեղինակ) **«Սննդային թափոնների հիմնախնդիրներն ու իրավական հակասություններն Անտիկ ժամանակաշրջանից մինչև այսօր»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը (այսուհետ՝ ատենախոսություն) քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի նիստում (21.05.2025, արձանագրություն N 4), մասնակցությամբ ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Թ. Շաքարյանի, ի.գ.դ., պրոֆեսորներ Գ.Դանիելյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Հակոբյանի, Ա.Ղամբարյանի, ի.գ.թ. դոցենտներ Ա.Եզեկյանի, Ա.Ասատրյանի, Տ.Խաչիկյանի և Լ.Հակոբյանի, ի.գ.թ. Մ.Մկրտչյանի, դասախոս Գ.Նավասարդյանի, նիստի քարտուղար՝ Ա.Հովհաննիսյանի:

Ատենախոսության ուսումնասիրությունից երևում է, որ Հեղինակն իր առջև նպատակ է դրել ուսումնասիրել և սահմանել սննդային թափոնների բնույթը, անդրադառնալ վերջիններիս առանձին խնդիրներին ու հետևանքներին, ընդգծել խաթարումները, հատկապես դրանց մեծամասշտաբ բաշխման մեջ, ինչպես նաև ցուցակագրել թափոնների կառավարմանն ու կանխարգելմանն առնչվող

լայնածավալ օրենսդրական և կարգավորող միջոցառումները: Աշխատանքի նպատակ է սահմանվել նաև սննդամթերքի թափոնների հետ կապված հատուկ խնդիրները: Այս նպատակին հասնելու համար Հեղինակը փորձել է բացահայտել տարբեր տնտեսական պատճառներ, որոնք նպաստում են սննդային թափոնների առաջացմանը: Այս պատճառները ներառում են այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են՝ գների տատանումները, որակի չափանիշները, շուկայի հարկադրանքները և սուբսիդիաները:

Թեմայի արդիականությունը կարևորվում է նրանով, որ, ի թիվս դրական միտումների ու տեխնոլոգիական թռիչքաձև զարգացումների, ժամանակակից հասարակությունը ընդգծված աչքի է ընկնում նաև սպառողական հասարակության բացասական դրսևորումներով: Վերջիններից է նաև սննդային թափոնների աճի ահագնացող տեմպերը, ինչը ոչ միշտ է արժանանում իրավական պատշաճ գնահատականի, իսկ այնուհետև՝ նաև կարգավորումների: Սննդային թափոնները շարունակում են վնասել համաշխարհային տնտեսությունը և նպաստել կլիմայի փոփոխությանը, աղտոտմանը, ինչպես նաև շրջակա միջավայրին շարունակական վնասմանը:

Հեղինակն իր հետազոտությունում անդրադառնում է այս հիմնախնդրին, և առաջարկում կոնկրետ լուծումներ: Իսկ այդ լուծումներին հանգելու համար կատարում է խորքային, պատմահամեմատական ուսումնասիրում սննդային թափոնների իրավական հիմնահարցերի բնագավառում անտիկ ժամանակաշրջանից մինչ այսօր: Վերլուծության հիմքում ընկած է իրավական և պատմական տեսակետը. այն փորձում է բացահայտել աղքատության աճի և հնացած, չկանոնակարգված ագրոպարենային համակարգի միջև հարաբերակցությունը:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, այն հնարավորություն է տվել նախապատվելի համամասնությամբ անդրադառնալու առավել ընդհանուր հարցադրումների քննարկմանը:

Ներկայացված աշխատանքը կազմված է ներածությունից, երկու մասից, երկու գլխից, որոնք, ընդհանուր առմամբ, ներառում են ութ բաժին, եզրակացությունից,

օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև աշխատանքին կցված են նաև տեխնիկական տեղեկատվություն պարունակող հավելվածներ:

Ներածությունում հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը, թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ատենախոսության տեսական և նորմատիվ հիմքերը, մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթներ:

Աշխատանքի առաջին մասի առաջին գլխում Հեղինակը անդրադարձել է սննդային թափոնների հիմնահարցերին և դրանց պատմական ծագման առանձնահատկություններին, սոցիալ-պատմական, տնտեսական և իրավական նախադրյալներին: Ուսումնասիրությունը բացահայտում է անտիկ ժամանակաշրջանից մինչև միջնադարյան հիմնական եվրոպական հասարակություններում առկա նախադրյալները, համադրում դրանք այլ հասարակություններում առկա նախադրյալների հետ, այնուհետև պատմական ընթացքը շարունակում մինչև նոր և նորագույն ժամանակաշրջան՝ շեշտ դնելով 20-րդ, իսկ այնուհետև՝ 21-րդ դարի միջազգային իրավական զարգացումների բաղադրիչի վրա ու ներկայացնում դրանց ազդեցությունը ազգային օրենսդրությունների կատարելագործման վրա:

Աշխատանքի առաջին մասի երկրորդ գլխում Հեղինակը ընդգծված ձևով ներկայացնում է սննդային թափոնների ազդեցությունը մարդկության զարգացման և դրանում առկա ճգնաժամերի խորացման վրա: Դրանք ներկայացվում են որպես բնապահպանական առումով աղտոտման և գլոբալ տաքացման հիմնական գործոն, իսկ դրանց արտադրությունն ու կառավարումը մոբիլիզացնում են թանկարժեք ռեսուրսները, ինչպիսիք են ջուրը, էներգիան և գյուղատնտեսական հողերը՝ միաժամանակ առաջացնելով ջերմոցային գազերի, հատկապես մեթանի զգալի արտանետումներ: Այս կորուստները վնասում են նաև կենսաբազմազանությանը՝ նվազեցնելով մշակվող և սպառվող տեսակների բազմազանությունը: Այս ամենի կառավարման և իրավական կարգավորումների թերացումները, իրավական բացերը, առկա իրավական նորմերի չկիրառումը ավելի է բարդացնում խնդիրը:

Աշխատանքի երկրորդ մասի առաջին գլխում Հեղինակը ներկայացնում է

ժամանակակից կանաչ տնտեսությունների առաջացման սոցիալական անհրաժեշտության ու դրա իրավական կարգավորման առանձնահատկությունները՝ հաշվի առնելով թե՛ միջազգային իրավական զարգացումները, հատկապես՝ ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների, և թե՛ առանձին՝ ոլորտում առաջադեմ պետությունների ներպետական օրենսդրությունների շրջանակներում:

Աշխատանքի երկրորդ մասի երկրորդ գլխում Հեղինակն արդեն ներկայացնում է ուրույն ճանապարհային քարտեզ սննդային թափոնների ազատ, առավել պատասխանատու հասարակություն ձևավորելու տնտեսական, սոցիալական և հատկապես իրավական գործիքները:

Այս գլխում Հեղինակը անհատական վարքագծից զատ հրամայական է դարձնում արտադրության և բաշխման համակարգերի վերափոխումը և դրանք արդյունավետ իրավական կարգավորման ներքո պահելը: Ներկայիս սննդային շղթաները, որոնք ղեկավարվում են արդյունաբերական տրամաբանությամբ և առևտրային շահերով, ըստ Հեղինակի, պետք է վերաուղղորդվեն ավելի ներառական և բարոյական գործելակերպերի, իսկ իրավական գործիքները դրանում դառնում են առանցքային: Սա ներառում է մանրածախ արտադրողներին ավելի մեծ աջակցություն, չվաճառված սննդամթերքի արժեքավորման բարելավում և կարճ բաշխման ուղիների ամրապնդում: Տեխնոլոգիական նորամուծությունները, ինչպիսիք են թվային հարթակները, որոնք հեշտացնում են սննդի նվիրատվությունը կամ պաշարների հետագծման գործիքները, կարող են առանցքային դեր խաղալ այս անցման մեջ: Հեղինակի համոզմամբ անհատները, որպես սպառողներ, նույնպես վճռորոշ դեր ունեն սննդի կայուն համակարգին աջակցելու գործում: Սպառողի յուրաքանչյուր ընտրություն ուղղակիորեն ազդում է ամբողջ շղթայի վրա: Սննդային վարքագծի հետևանքների հավաքական գիտակցությունը՝ ներառյալ ռեսուրսների ավելի քիչ օգտագործում պահանջող սննդակարգերի ընդունումը, օգնում է սահմանափակել թափոնները և նվազեցնել ճնշումը շրջակա միջավայրի վրա:

Եզրակացության մեջ ամփոփվել են կատարված հետազոտության արդյունքները՝ եզրահանգումների տեսքով:

Աշխատանքը, հիմնականում, շարադրված է գիտական պատշաճ լեզվաոճով, այն գրեթե զերծ է թերի, բազմիմաստ մտքերից, քերականական կանոնների

շեղումներից, *սակայն առկա են լեզվական կանոնների որոշ շեղումներ, որոնք հավանաբար կապված են անգլերենից հայերեն թարգմանության որակի հետ:*

Ատենախոսության ձևավորումը համապատասխանում է ԲՈՀ-ի կողմից սահմանված կանոններին: Այդ կանոններին համապատասխանում են նաև աշխատության կառուցվածքը և ծավալը:

Հեղինակն ուսումնասիրել է ընտրված հարցերին անմիջականորեն վերաբերող մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող իրավակիրառական նյութերը, դատական ակտերը, ինչպես նաև տարբեր երկրների փորձը, միջազգային փաստաթղթերը, ինչը հնարավորություն է տվել հեղինակին առավելագույնս համալիր անդրադառնալու խնդրո առարկա հարցադրումների:

Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է ինքնուրույն հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից պատշաճ օգտվելու և ինքնուրույն եզրահանգումներ առաջադրելու կարողություններ, որոշակի առումով դրսևորել է նաև իրավակիրառ պրակտիկան բարելավելուն, օրենսդրական ակտերում որոշակի փոփոխություններ կատարելուն ուղղված առաջարկություններ մշակելու անհրաժեշտ ունակություններ:

Միաժամանակ, կարծում ենք, ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները ներկայացված են ստորև.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

1.1 Լեզուն և ակադեմիական ոճը

Աշխատանքի ոճը հիմնականում ակադեմիական է, սակայն կան որոշ հատվածներ, որոնք կազմված են չափազանց երկար նախադասություններից, ինչը տեքստը երբեմն դժվար ընթեռնելի է դարձնում և հաճախ կորչում է մտքի տրամաբանական կապը: Սոցիալ-տնտեսական, բնապահպանական և այլ հարցերին անդրադառնալիս իրավական բառապաշարը օգտագործվում է, բայց առանձին հատվածներում հարստացման կարիք է զգում՝ հետազոտության առանձին փաստարկների կշիռն ամրապնդելու համար: Հետազոտությունը, միջառարկայական հայեցակարգային մոտեցումներին զուգահեռ լինելով իրավական հետազոտություն, շատ ավելի պետք է հարուստ լիներ իրավագիտական մտքով, քան այլ գիտակարգերի: Մինչդեռ աշխատանքում գերակայում են ոչ այնքան

իրավագիտական, որքան սոցիալ-տնտեսական, շուկայական հարաբերություններից բխող և բնապահպանական ոլորտների բառապաշարն ու հետազոտական նյութը:

Կարևոր է նշել, որ ատենախոսության հայերեն թարգմանությունն աչքի է ընկնում մեծ քանակությամբ մտքի սխալներով և այլ քերականական խնդիրներով:

1.2 Մեթոդաբանություն և էմպիրիկ տվյալներ

Մեթոդաբանական մոտեցումը լավ նկարագրված է (պատմական, համեմատական, էմպիրիկ), սակայն էմպիրիկ տվյալներին պակասում է վիզուալ ներկայացումը (գրաֆիկներ, աղյուսակներ): Սննդի թափոնների վերաբերյալ համեմատական գրաֆիկաները ըստ երկրների (թափոնացված տոննաներ, վերականգնված տոկոս, տնտեսական ազդեցություն) կօգնեն ավելի լավ պատկերել խնդիրները:

Բացի այդ, տվյալների թարմացումը օգտակար կլիներ, հատկապես 2023 թվականից հետո վիճակագրությամբ: Օրինակ՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) 2024թ. հաշվետվությունները սննդի թափոնների վերաբերյալ կամ Եվրոստատի 2025թ. վիճակագրությունը կամրապնդեին վերլուծությունը:

Աշխատանքը մեծապես կշահեր, եթե դրանում առկա լինեին նաև «դաշտային» հետազոտությունների տվյալներ, մասնավորապես՝ սննդի բանկերի ղեկավարներից, խոշոր մանրածախ տնտեսվարող սուբյեկտներից կամ օրենսդիրներից ստացված վիճակագրական տեղեկատվությունները լրացուցիչ պատկերացում կտային սննդի թափոնների դեմ պայքարում առկա մարտահրավերների մասին:

2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

2.1 Գիտական նորույթի արժեքը

Ատենախոսության գիտական նորույթը գործնական արժեք ներկայացնող հիմնախնդրի ներկայացումը և վերլուծումն է՝ ընդգծելով դրա ճանաչողական, գործնական և տեսական նշանակությունը՝ ամփոփելով այն կոնկրետ եզրահանգմամբ: Ատենախոսությունում առաջադրված եզրահանգումները ունեն ընդգծված գործնական ուղղվածություն, դրանք նաև ուղեկցվել են տեսական հիմնավորումներով և ունեն որոշակի տեսական արժեք, սակայն աշխատանքն էլ ավելի շահեկան կլիներ, եթե դրանում ներկայացված եզրահանգումները

առավելապես միտված լինեին գիտական օրինաչափությունների բացահայտմանը, այլ կերպ ասած՝ առավել հստակ ընդգծվեր այդ առաջարկությունների բուն գիտական արժեքը, դրա կիրառման առնչությամբ ներկայացվեին առավել համակարգային տեսական դիրքորոշումներ, ինչը խնդրի լուծումը նկատելիորեն կդարձներ ամբողջական:

Ուստի նշվածի համատեքստում, թերևս, հիմնավորված չէ Հեղինակի կողմից որպես գիտական նորույթ ներկայացնելը պաշտպանության հանվող հինգերորդ դրույթը, համաձայն որի 2016 թվականի փետրվարի 3-ին Ֆրանսիայում ընդունված սննդամթերքի թափոնների դեմ օրենքը ագրոպարենային ոլորտում մեծ օրենսդրական նորամուծություն է որակվում:

Գիտական նորույթ չի կարող լինել միայն այն փաստը, որ Հեղինակը հռչակում է կոնկրետ պետության կոնկրետ նորմատիվ իրավական ակտը որպես այս բնագավառում արդի իրավական զարգացումների գագաթ: Այն, որ Ֆրանսիան այս հարցում առաջամարտիկ դեր է ստանձնել՝ հաղթահարելով տարբեր խոչընդոտներ, ինչպիսիք են լոբբիստական ճնշումները, տարբեր պետությունների տարամետ շահերը և երբեմն կառավարությունների անտարբերությունը, դեռևս չի նշանակում, որ այդ փաստի ցիտումն արդեն իսկ կարելի է ներկայացնել որպես գիտական նորույթ:

Հետևաբար պաշտպանության այս դրույթը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի այն համատեքստում, որ պետք է բացահայտված լիներ դրա գիտական արժեքը, որոշակի ընդհանրացումների արդյունքում միտված լիներ գիտական օրինաչափությունների բացահայտմանը:

Ըստ էության պաշտպանության ներկայացվող մյուս դրույթները՝ դրանում ներկայացված եզրահանգումները, առավելապես պետք է միտված լինեին գիտական օրինաչափությունների բացահայտմանը, այլ չսահմանափակվեին որոշակի դատողությամբ՝ առանց համապատասխան հիմնավորումների:

2.2. Գիտականություն

Ատենախոսությունում առաջադրված եզրահանգումները, ինչ խոսք, ունեն գործնական ուղղվածություն, դրանք նաև ուղեկցվել են տեսական հիմնավորումներով, սակայն աշխատանքն էլ ավելի շահեկան կլիներ, եթե այդ պաշտպանության դրույթներում արտացոլված եզրահանգումները ոչ միայն

անմիջականորեն վերաբերեին օրենսդրական փոփոխություններին, այլև որոշակի ընդհանրացումների արդյունքում միտված լինեին գիտական օրինաչափությունների բացահայտմանը, այլ կերպ ասած՝ ընդգծվեր այդ առաջարկությունների բուն գիտական արժեքը, դրա կիրառման առնչությամբ ներկայացվեին առավել համակարգային տեսական դիրքորոշումներ, ինչը խնդրի լուծումը նկատելիորեն կդարձներ ամբողջական, և նոր դրա հիման վրա ներկայացվեին օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ:

2.3. **Գիտականության և գործնականի կապը**

Ատենախոսության գիտական արժեքը գիտական նորարարությունների բացահայտման մեջ է (տվյալ պարագայում՝ միգուցե ագրո-սննդային համակարգի բարեփոխում, սննդի թափոնների կապը կլիմայի փոփոխության հետ): Սակայն աշխատանքում օրենսդրական առաջարկների և տեսական գրականության հետ կապը երբեմն թերի է մշակված, օրինակ՝ Ռուսոյին վերագրվող «Հասարակական դաշինքի» գաղափարի հետ կապված պատճառականությունը օրենսդրական կարգավորման առանձնահատկությունների հետ: Միգուցե Ռուսոյի «Հասարակական դաշինաքի» գաղափարը եթե աշխատանքում ավելի խորքային ձևով բացահայտվեր և այն համադրվեր արդի իրականության առանձնահատկություններին, ավելի տեսանելի կլիներ, որ սննդի թափոնների դեմ պայքարը ժամանակակից սոցիալական պայմանագրում ամրագրված կոլեկտիվ պարտականություն է: Այստեղ տեղին կլիներ նաև առաջարկելը կոնկրետ օրենսդրական նախագծեր, որոնք կներառեին սպառողների իրավունքների, տնտեսվարող սուբյեկտների պարտավորությունների և հարկային գործիքների ներդաշնակ օգտագործման իրավական կառուցակարգերը:

2.4. Փաստարկման և հիմնավորման կառուցվածք

Փաստարկումը լավ կազմակերպված է հիմնավոր ներածությամբ և կառուցվածքային պլանով, սակայն որոշ բաժիններում բացակայում են սահուն անցումները և միջանկյալ ամփոփումները: Օրինակ, աղքատության և մեծածախ առևտրի առաջացման վերաբերյալ պատմական մասում վերլուծությունը հարուստ է, սակայն սննդի թափոնների հետ այս իրավական հարցերի կապը ակնհայտ չէ: Սա ընդհատումներ է ստեղծում փաստարկման տրամաբանության մեջ:

Աշխատանքը շատ ավելի շահեկան վիճակում կլիներ, եթե յուրաքանչյուր ենթաբաժնի վերջում կարճ ամփոփումը լիներ: Սա թույլ կտար պատմական իրադարձություններն ու գործոնները ավելի սահուն կապել ժամանակակից խնդիրների հետ: Առավել ևս, որ աշխատանքի վերնագիրը հենց հուշում է, որ խնդրո առարկայի իրավական հիմնախնդիրները հենց պատմական էվոլուցիոն օրինաչափության մեջ են:

Այս լույսի ներքո գիտականության տեսանկյունից առանցքային կլիներ, օրինակ, պատմական վերլուծության վերջում ներկայացնելն այդ փուլի իրավական խնդիրները՝ ցույց տալով, թե ինչպես են անցյալի սննդի ճգնաժամերը պետություններին ստիպել օրենսդրություն մշակել, և այս ամենը ներկայացնել աշխատանքում էվոլուցիոն զարգացման տրամաբանությամբ:

2.5. **Իրավական վերլուծության խորությունը**

Հեղինակը տրամադրում է սննդի թափոնների օրենսդրության մանրամասն վերլուծություն տարբեր երկրներում (Ֆրանսիա, Իտալիա, Բելգիա և այլն), բայց այս օրենքների և Եվրոպական Միության օրենսդրության միջև փոխկապակցվածությունը մնում է թերի ուսումնասիրված:

Աշխատանքը մեծապես կշահեր, եթե դրանում առկա լինեին տարբեր երկրների, օրինակ, ԵՄ դիրեկտիվների ներքո օրենսդրությունների խորը համեմատություն ոչ միայն պատմաիրավական տեսանկյունից, այլ նաև միևնույն ժամանակաշրջանում գործող օրենսդրությունների միջև: Նույն տրամաբանությամբ աշխատանքը կշահեր, եթե դրանում ներառված լինեին կոնկրետ օրինակներ օրենքների կիրառման վերաբերյալ կոնկրետ տնտեսական օբյեկտներում կամ վեր հանվեին դրանց ազդեցությունը սննդի բանկերի վրա: Էմպիրիկ տվյալները (վերականգնված սննդի քանակություն, ազդեցություն բարեգործական կազմակերպությունների վրա և այլն) կարող էին ցուցադրել ուսումնասիրված օրենքների արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ նկատառումները՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ **Արաշ Դերամբարշի «Սննդային թափոնների հիմնախնդիրներն ու իրավական հակասություններն Անտիկ ժամանակաշրջանից մինչև այսօր»** վերտառությամբ թեկնածուական

ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով՝ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է **ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ** մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ պետական կառավարման իրավագիտության ամբիոնի վարիչ,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Թ.Ա.Շաքարյան**

Նիստի քարտուղար՝ **Ա.Վ.Հովհաննիսյան**

Ամբիոնի վարիչ Թ. Շաքարյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ս. Հ. Պողոսյան**